

13729



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«10» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 274 - 24

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝

Բյուրակն բնակավայրի կրթահամալիրի կառուցում
Շիրակի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 274 - 24

«10» ցնկյունիսի 2024թ.

Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրում կառուցվող
կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	« Բ » կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Բյուրակն բնակավայր

Ներածական մաս. ««ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/
նախատեսում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրում կառուցել
կրթահամալիր: Գործունեությունն իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող,
հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության
մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝
նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության
տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի կողմից
ներկայացված գնահատման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների
պետական գրանցման վկայականը՝ № /13032017-08-0012/ ծածկագիրը՝ 08-033-0013-0011
/, Ամասիա համայնքի ղեկավարի կողմից 20.05.2024թ.-ին № 14 տրված
ճարտարապետահատակագծային առաջադրանքը:



Կառուցապատվող հողամասի նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուակն բնակավայրում: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է գյուղի կենտրոնական մասում, ներկայիս դպրոցի շենքի հարակից տարածքում, մասամբ ընդգրկելով հին դպրոցի ավերակները: Համաձայն ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների եզրակացության՝ տեղամասում մինչև 10.5 մետր խորությամբ ստորերկրյա գրունտային ջրեր չեն հայտնաբերվել, տեղակայված են 12-15 մ խորությունների վրա:

Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1729-1731 մետրի սահմաններում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել՝ նոր դպրոցի շենքի և կաթսայատան կառուցում՝ գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժում, նոր դպրոցի կառուցապատումից ազատ տարածքների և ապամոնտաժված դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Նախատեսված է կառուցել տիպային կրթահամալիր՝ դպրոց 200 աշակերտի համար և մանկապարտեզ՝ 80 մանկապարտեզի սաների համար: Դպրոցը նախատեսվում է կառուցել երկհարկ, որը կունենա նաև նկուղային հարկ, որը ծառայելու է որպես պարզագույն թաքստոց: Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից ու երկհարկանի մանկապարտեզից: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա: Մարզադահլիճի չափերը հետևյալն են՝ 24.7մx18.0 մ: Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը: Նկուղային հարկում նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, տղաների և աղջիկների սանհանգույցներ, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող վերելակ հաշմանդամների համար: Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսուլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար: Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից՝ չորս խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում



տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Երկրորդ հարկում նույն կազմն է միայն վարիչի և բժշկի սենյակի փոխարեն ավելացել է հանդիսությունների սենյակ:

Կրթահամալիրին կից նախատեսվում է նաև կառուցել մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք:

Համալիրն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, ապահովվելու է համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրոյթներով: Շենքն ապահովված է լինելու էվակուացիոն ելքերով: Ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ: Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ: Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով: Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով: Կրթահամալիրի ջրամատակարարումն իրականացվելու համաձայն համայնքապետարանի կողմից տրված տեխնիկական պայմանի, հարևան փողոցով անցնող ջրագծից: Գազամատակարարման, էլեկտրոմատակարարման և ջրամատակարարման համար կառուցապատողը դիմել լիազորված մարմիններին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար: Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից $2 \times (1.7 \times 2.3 \times 1.8 \text{մ } W=7 \text{մ}^3)$, որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ն աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wilo SiBoost Smart 4 HelixVE 404, $Q=5.0 \text{լ/վրկ}$, $H=30.0 \text{մ}$, $N=4 \times 0.75 \text{կՎտ}$, $3 \sim 400 \text{V}$: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով: Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ որը սնվելու է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից $2 \times (1.7 \times 2.3 \times 1.8 \text{մ } W=7 \text{մ}^3)$, որոնցում առկա կլինեն հրդեհամարման անհրաժեշտ ջրի քանակը: Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանալու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին



բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դեմոնստրացիա:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 27400 մ²,
- Կառուցապատման մակերեսը՝ 2109.2 մ²
- Կանաչապատման մակերեսը՝ 17192.8 մ²

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 26113 մ³, որից հետլիցքը՝ 7000 մ³: Մնացած՝ 19113 մ³ ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 3000մ³: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատումներ տեղի չի ունենալու: Կանաչապատումն իրականացվելու է Բյուրակնի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է՝ կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով, նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում՝ նոր ծառատեսակներով փոխարինում: Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Հողային ռեսուրսների պահպանության համար ձեռնարկվելու են միջոցառումներ, որոնք կբացառեն բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում՝ դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտն օգտահանվելու է և պահեստավորվելու է առանձին՝ անջրմուխաց թաղանթով, կատարվելու է խախտված հողերի վերականգում, շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային



սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,

- մեքենաների անիվների վազման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավարի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լուսններում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Շիրակի մարզպետարանից, Ամասիայի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան